

ՀՀ Տավուշի մարզ քաղաք Դիլիջան

Դիլիջան համայնքի 2006թ. բյուջե

Ըստ աշխատանքի արդյունքների

Դիլիջանի քաղաքապետ

Ա. Սանթրոսյան

Դիլիջանի քաղաքապետարանի
ֆինանսական բաժնի պետ

Գ. Դավթյան



Սույն ձեռնարկը պատրաստվել է Միավորված ազգերի զարգացման ծրագրի «Ըստ աշխատանքների կատարման բյուջետավարում» նախաձեռնության շրջանակներում:

ՀՀ Տավուշի մարզ քաղաք Դիլիջան

Դիլիջան համայնքի 2006թ. բյուջե

Ըստ աշխատանքի արդյունքների

Դիլիջանի քաղաքապետ

Ա.Սանթրոսյան

Դիլիջանի քաղաքապետարանի
ֆինանսական բաժնի պետ

Գ. Դավթյան

Քաղաքապետի ուղերձը

Դիլիջան համայնքի 2006 թ. բյուջեն նպատակաուղղվել է քաղաքի երբեմնի բարի համբավի վերականգնման գործընթացների իրականացմանը: Համայնքի առաքելությունն է որակյալ ծառայություններ մատուցել համայնքի բնակչությանը և զբոսաշրջիկներին: Նպատակը՝ բարելավել դիլիջանցիների ապրելակերպը, քաղաքը դարձնել տուրիստական հրապուրիչ կենտրոն:

Համայնքի ռազմավարական նպատակն է՝ բարելավել բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները՝ հետևողականորեն բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով:

Դիլիջանի քաղաքապետարանի 2006 թ. բյուջետային քաղաքականության հիմնական ուղղություններն են.

Բարելավել համայնքի ֆինանսական դրությունը՝ իրականացնելով ոչ հարկային եկամուտների, տեղական տուրքերի ու վճարների սահմանման և գանձման արդյունավետ քաղաքականություն:

Ըստ ամենայնի խթանել ձեռներեցությունը՝ այն սերտորեն կապելով համայնքի տնտեսական զարգացման հետ:

Քայլեր ձեռնարկել վերականգնելու զբոսաշրջության ուղղությամբ եղած ավանդույթները, ապահովել ազգաբնակչության կենսագործունեության ժամանակից պայմաններ, պահպանել քաղաքի ճարտարապետության արդի ոճը՝ կենտրոնում և 19-րդ դարավերջի ոճը՝ Շարամբեյան փողոցում: Բացառել ինքնական շինարարությունը և հողազավթումները:

Ապահովել սպասարկող կազմակերպությունների աշխատանքի բարձր արդյունավետությունը, հաշվի առնելով քաղաքացիների առաջարկությունները:

Բարելավել կրթական և մշակութային ոլորտի գործունեությունը, մշտապես հարստացնելով նրանց նյութատեխնիկական բազան: Բարձրացնել երիտասարդության ֆիզիկական դաստիարակության ուղղությամբ տարվող աշխատանքների մակարդակը:

Շարունակել քաղաքի բարեկարգումը:

Դոնոր կազմակերպությունների և արտերկրում աշխատող դիլիջանցիների համագործակցությամբ ապահովել ներդրումներ քաղաքաշինության, կապիտալ շինարարության, նոր արտադրություններ հիմնելու բնագավառում:

Համայնքի 2006թ. բյուջեն մշակվել է ըստ աշխատանքների արդյունքների արտահայտման բյուջետավարման ձևաչափի ՄԱԿ-ի զարգացման ծրագրերի և համայնքների ֆինանսիստների միավորման աջակցությամբ:

Բյուջետային քաղաքականությունը իրականացնելիս կարևոր տեղ է տրվելու բյուջեի թափանցիկությանն ու հրապարակայնությանը:

Դիմում են համայնքի ավագանուն, քաղաքապետարանին և դրա ենթակա կառույցների աշխատակիցներին, բոլոր դիլիջանցիներին, որպեսզի շահագրգիռ մոտեցում ցուցաբերվի համայնքի 2006թ. բյուջեի գոյացման, դրա օգտագործման ուղղությունների ճիշտ ընտրության և բյուջեի կատարման գործուն մեխանիզմների ապահովման հարցերին:

Քաղաքապետ՝

Ա. Վ. ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

Համայնքի առաքելություն և ռազմավարական նպատակ

Համայնքի առաքելությունն է որակյալ ծառայություններ մատուցել համայնքի բնակչությանը եւ զբոսաշրջիկներին, որպեսզի բնակիչները ապրեն բարեկեցիկ կյանքով և Դիլիջանը դառնա հրապուրիչ ու գեղեցիկ տուրիստական կենտրոն:

Համայնքի ռազմավարական նպատակն է՝ բարելավել բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները հետևողականորեն բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով, վերականգնել Դիլիջանի՝ որպես զբոսաշրջության և առողջարանային կենտրոն համարվելու բարի համբավը:

Համայնքի իրավիճակի վերլուծություն, առկա ռեսուրսների գնահատում ու կանխատեսում

Ժողովրդագրություն

Դիլիջան քաղաքը գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքի հյուսիս-արևելյան հատվածում: Մշտական բնակչության թվաքանակը ըստ ՀՀ 2001թ. մարդահամարի արդյունքների 16202 է, որոնցից 7586-ը՝ տղամարդիկ և 8616-ը՝ կանայք: Նույն մարդահամարի արդյունքներով առկա բնակչության թիվը կազմում է 14846, որոնցից 6775 տղամարդիկ են, 8071-ը՝ կանայք:

Քաղաքն ունի գեղատեսիլ բնություն: Մեղմ կլիման, լեռնային մաքուր օդը, հանքային բուժիչ ջուրը, անտառները նպաստավոր են բնակչության հանգստի կազմակերպման և տուրիզմի զարգացման համար:

Համայնքի տարածքում գործում են «Իմպուլս» գործարանը /ոչ լրիվ հզորությամբ/, «Դիլիջան» և «Դիլիջան ֆրոլովա բալկա» հանքային ջրերի գործարանները: Դիլիջանում գրանցված են 1200 արտադրական և ոչ արտադրական մասնավոր ձեռնարկություններ, որոնցից գործում են 360-ը:

Դիլիջան քաղաքում գործում են հինգ հանրակրթական դպրոցներ 2300 աշակերտով, մեկ հատուկ դպրոց, վեց մանկապարտեզ 370 սաներով: Կան նաև երեք միջին մասնագիտական և երկու բարձրագույն ուսումնական հաստատություններ, որտեղ սովորում են 470 ուսանողներ:

Ըստ պաշտոնական տվյալների քաղաքում կան 3200 թոշակառուներ, 1432 գրանցված գործազուրկներ, 1280 նպաստառու ընտանիքներ:

Ջրադրվածություն

Քաղաքի բնակչությունն ըստ զբաղվածության բաժանվում է մի քանի խմբի՝ մանր և միջին առևտրով զբաղվողներ, պետական և տեղական ինքնակառավարման կառուցվածքներում աշխատողներ, գործազուրկներ, սեզոնային շինարարություններում աշխատողներ, սպասարկման ոլորտում աշխատողներ, որոնք մոտավորապես կազմում են բնակչության 35-40%-ը:

Տեղական ինքնակառավարման մարմիններ

2005 թ. հոկտեմբերի 16-ին Դիլիջանում կայացան տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ: Ընտրվեց քաղաքապետ և համայնքի ավագանի: Ավագանին բաղկացած է 11 անդամներից: Քաղաքապետի աշխատակազմը ներկայանում է հետևյալ կառուցվածքով՝ քաղաքապետի տեղակալ, խորհրդական, աշխատակազմի քարտուղար, իրավաբան, քարտուղարություն, ֆինանսական բաժին, ճարտարապետության և քաղաքաշինության բաժին, կոմունալ տնտեսության և շրջակա միջավայրի պահպանություն բաժին, բնակելի ֆոնդերի սպասարկման բաժին,

գյուղատնտեսությունը բաժին, կրթության, մշակույթի և սպորտի բաժին, տեղեկատվական վերլուծական բաժին:

Մշակույթ, կրթություն և սպորտ

Համայնքում համեմատաբար բարձր է կրթամակարդակը: Քաղաքում կան հինգ հանրակրթական դպրոցներ և մեկ հատուկ դպրոց: Քաղաքի դպրոցներ հաճախում են 2300 աշակերտներ, ուսուցիչների թիվը՝ 222, որից 80%-ը ունեն բարձրագույն կրթություն: 2004-2005 ուսումնական տարին գերազանց առաջադիմությամբ ավարտել են 39 աշակերտ: Համայնքում գործում է վեց մանկապարտեզ 300 սաներով: Կան նաև երեք միջին մասնագիտական և երկու բարձրագույն ուսումնական հաստատություններ, որտեղ կրթվում են 470 ուսանողներ:

Դպրոցների աշակերտները մասնակցում են դպրոցականների հանրապետական օլիմպիադաների և ունեն նշանակալի ձեռքբերումներ: Քաղաքի 5 դպրոցներ ընդգրկված են դպրոցների բարելավման փորձարարական ծրագրում: Հանրակրթական դպրոցներից 3-ը՝ մանկապարտեզներից 5-ը՝ գազաֆիկացված են:

Կրթական օջախներ	Քանակը	Սովորողների թիվը	Դասավանդողների թվաքանակը
միջնակարգ դպրոցներ	5	2300	222
միջին մասնագիտական բարձրագույն	3	360	
մանկապարտեզներ	2	110	30
մանկական երաժշտական դպրոցը	8	259	63
երաժշտական ուսումնարանը	1	80	
գեղարվեստի մանկական դպրոց	1	290 աշակերտներ և 90 ուսանողներ	70

Գործում են դաշնամուրի, քանոնի, դուդուկի, շվիի, կլարնետի, ակորդեոնի, ջութակի դասարանները:

Դիլիջանի տարածքը հարուստ է պատմամշակութային կառույցներով՝ վանքային համալիրներ, խաչքարեր: Հատկանշական են Գոշավանքը, Հաղարծնի ու Ջուխտակ վանքերի համալիրները:

Երկրագիտական թանգարան

Քաղաքում իրենց ուրույն տեղն են զբաղեցնում երկրագիտական թանգարանը և Երևանի ժողովրդական արվեստի թանգարանի մասնաճյուղը: Թանգարանի շենքը կառուցվել է 1900 - ական թվականներին, գտնվում է խիստ վթարային վիճակում: Թանգարանում պահպանվում և ցուցադրվում են 3000-ամյա հնագիտական իրեր, համաշխարհային նշանակություն ունեցող և ազգային արժեքներ ներկայացնող ցուցանմուշներ (գեղանկար, արժաթյա իրեր և այլն):

Թանգարանն ընդգրկված է մարզի զբոսաշրջության երթուղում: Աշխատողների թիվը կազմում է 4 հոգի:

Մշակույթի պալատ

Մշակույթի պալատի շենքը կառուցվել է 1972թ., վերջին անգամ նորոգվել 1986թ.-ին:

Շենքի տեխնիկական բնութագիր

Դահլիճի տեղերի քանակը	551
փոքր դահլիճ	0

խմբասենյակները	14
Աշխատողների թիվը	30

Յուրաքանչյուրի անվան գեղարվեստի դպրոց

Յուրաքանչյուրի անվան գեղարվեստի դպրոցն ստեղծվել է 1970թ. ՀՀ վաստակավոր նկարիչ Յ. Յուրաքանչյուրի կողմից: Շենքի տեխնիկական վիճակը բավարար է, անհրաժեշտ է ընթացիկ վերանորոգում (հարդարում, տանիքի մասնակի նորոգում): 1999-2000թթ. Ջինիշյան հիշատակի հիմնադրամի օժանդակությամբ վերակառուցվել է ցուցասրահ-դահլիճը, որտեղ գործում է մանկական ստեղծագործության մշտական ցուցասրահ-դահլիճը՝ մանկական ստեղծագործության մշտական ցուցահանդես-պատկերասրահով: Գործունեության տեսակներն են գեղանկարչություն, դեկորատիվ կիրառական արվեստ, մաքրամե, գորբելեն, ժանյակ, փայտի գեղարվեստական մշակում: Դպրոցն ունի 12 աշխատակիցներ, իսկ հաճախող աշակերտների թիվն կազմում է 72: Դպրոցը գազիֆիկացված է:

Դիլիջանի գրադարանների կենտրոնացված համակարգ

Դիլիջանի գրադարանների կենտրոնացված համակարգը կազմված է կենտրոնական գրադարանից, /որը ժամանակավորապես տեղավորված է մշակույթի պալատում/ և 6 քաղաքային մասնաճյուղերից: Ընդհանուր գրքաֆոնդը կազմում է 221124 կտոր գրականություն, հաստիքների թիվը՝ 22: Կենտրոնական գրադարանի շենքը շահագործման է հանձնվել 1974թ.:1988թ. երկրաշարժից վթարվել է և կարիք ունի անրացման:

Մանկական զբոսայգի

Դիլիջանի մշակույթի և հանգստի մանկական զբոսայգին ստեղծվել է 1972թ.: Գործում են կիսախարխուլ, հնաժամ 6 կարուսեյներ, ատրակցիոններ: 2001թ. Ջինիշյան հիշատակի հիմնադրամի օժանդակությամբ ստեղծվել է մանկական խաղահրապարակ:

Սպորտ

Քաղաքում սպորտային կյանքը կանոնակարգում է քաղաքապետարանի մարզահամալիրը, որի կազմում գործում են ըմբշամարտի, ֆուտբոլի, թենիսի, վոլեյբոլի, ձեռքի գնդակի, բոքսի խմբակներ ուր հաճախում են 134 սաներ: Քաղաքն ունի նաև իր ֆուտբոլի հավաքականը «Իմպուլս» անվամբ: Մարզադպրոցի շենքը կառուցվել է 1965թ., կարիք ունի հիմնանորոգման: Աշխատողների թիվը 15 է:

Լրատվական միջոցներ

Քաղաքն ունի իր տեղական թերթն ու հեռուստատեսությունը, որոնք լուսաբանում են ինչպես տեղական, այնպես էլ հանրապետական իրադարձությունները:

Գյուղատնտեսություն

Բնակչության մի մասը զբաղվում է գյուղատնտեսությամբ, որը կազմում է բնակչության 10-15%-ը:

Գյուղատնտեսական նշանակության հողերը բաշխված են հետևյալ կերպ՝ .

Համայնքապատկան հողեր	հա
վարելահողեր	444
խոտհարքներ	685
արոտավայրերը	999

Հեռագնա պետֆոնդի հողեր	1676 հա
վարելահողեր	35
խոտհարքներ	300
արոտներ	1167

Գտնվելով խոնավ կլիմայական պայմաններում, հողերը չեն ոռոգվում, բնականից հարուստ չեն հումուսով:

Պտղատու այգիները տնամերձ են և կազմում են 249 հա: Բերքատվությունը բարձր չէ ոչ բարենպաստ կլիմայական գործոնների պատճառով:

Բնապահպանություն և կոմունալ տնտեսություն

Դիլիջան քաղաքն ունի համայնքային ենթակայության 931,7 հազ. քառ. մետր մակերեսով փողոցներ և ճանապարհներ, որից`

փողոցներ ճանապարհներ	կատարելագործված ծածկույթով	ոչ կատարելագործված ծածկույթով	առանց ծածկույթի
931,7 հազ. քառ. մ.	325,1 հազ. քառ. մ.	352,7 հազ. քառ. մ.	253,9 հազ. քառ. մ.

Փողոցների սանմաքրում և աղբահանություն

2002-2005 թվականներին քաղաքապետարանի հատկացրած միջոցներով սանմաքրման են ենթարկվել Շահումյան, Սյասնիկյան, Կալինինի, Գետափնյա ձախ, Ուսանողական փողոցները, հրապարակները, Սաքսիմ Գորկու փողոցի մի մասը, ժամանակ առ ժամանակ Գետափնյա աջ, քաղաքային հին հիվանդանոց և պոլիկլինիկա տանող ճանապարհները, իսկ ձմռանը ձյան հաստ ծածկույթի առկայության ժամանակ համարյա բոլոր փողոցները, ընդհուպ մինչև Շամախյան բարձրացող ճանապարհը: Վկայակոչված փողոցներում (նաև ոչ վկայակոչված) քաղաքապետարանի միջոցներով պատվիրվել և տեղադրվել է շուրջ 140 աղբարկղ, որից 10-ը` ընթացիկ տարվա հոկտեմբեր ամսին, յուրաքանչյուրը 1մխ աղբատարողությամբ: Շահումյան-Սյասնիկյան- հրապարակներ, Գետափնյա ձախ, Կալինինի փողոցներում տեղադրված աղբարկղների աղբի տեղափոխությունը կատարվում է ամեն օր, փողոցների մաքրումից գոյացած աղբի հետ մեկտեղ: Գետափնյա փողոցի և Շամախյան թաղամասի բազմաբնակարան շենքերից, Անդրանիկի թաղամասից, որոնք ունեն աղբուղիներ, աղբը տեղափոխվում է շաբաթը մեկ: Մնացած փողոցներից կենցաղային աղբահանությունը ևս կատարվում է 5-6 օրյա պարբերականությամբ: Քաղաքի որոշ հատվածներում աղբարկղներ չեն տեղադրված(Հակոբջանյան և Օրջոնիկիձե փողոցներն իրենց նրբանցքներով): Նշված փողոցներից աղբահանությունը կատարվում է շարժական ձևով, բնակիչները այն հավաքում են բակերում, սահմանված օրերին մեքենանաներով տեղափոխվում է աղբը:

Քաղաքի չմաքրվող փողոցների գոյացած աղբը իջնում է կենտրոնական փողոցներ, անխուսափելի է անձրևների և ձնհալոցների հետևանքով քաղաքի աղտոտումը բերվածքներից, որը ի դեպ պահանջում է ոչ միայն սանմաքրման լրացուցիչ աշխատանքներ, այլև քայքայում է ասֆալտի ծածկույթը, երբեմն էլ ստեղծում արտակարգ իրավիճակ և պահանջում լրացուցիչ ֆինանսական ներդրումներ: Թափառող շները անչափ շատ են քաղաքում և աղբարկղներից աղբը քարշ տալով ապականում են շրջակայքը (Թախտա, Շամախյան թաղամասեր և Հակոբջանյան փողոցից մինչև նախկին պրոֆուսուրմնարան ընկած հատված և այլուր):

Աննկարագրելի է խոզերի և խոշոր եղջերավորների հասցրած վնասը: Վերջին 2 տարում քաղաքի Գետափնյա փողոցում շաբաթօրյակի ժամանակ և ծրագրերով տնկված հարյուրավոր ծառերից հատ ու կենտ ծառեր են մնացել անվնաս:

Այսօր մեր քաղաքում բազմաթիվ են ջրմուղ-կոյուղու վթարների վերացման նպատակով քանդած և չվերականգնած փոսերը, որոնք ոչ միայն խաթարում են քաղաքի տեսքը, այլև վտանգավոր են ճանապարհային երթևեկության անվտանգության տեսանկյունից:

Անբարվոք վիճակում են ճանապարհային երթևեկության նշանները: Նշված հարցի կարգավորման համար անհրաժեշտ կլինի 2-2,5 միլիոն դրամ:

Համայնքի կոմունալ տնտեսության բաղադրիչներից են մակերեսային ջրերի հեռացման և հակասողանքային կառուցվածքները:

Ջրահեռացման համակարգ

Քաղաքն ունի 6825 գծամետր ընդհանուր երկարությամբ ջրահեռացման ուղի, որը ըստ փողոցների հետևյալ պատկերն ունի.

Փողոցի անվանում	Ջրահեռացման ցանց		վիճակը
	գծամետր	դիտահոր (հատ)	
Շահունյան	1600	20	խցանված, չգործող վիճակում է
Շահունյան 1-ին նրբանցք	150	4	
Գայի	200	8	
Ուսանողական	260	11	փողոցից դուրս ջրի ընդունման ուղին քայքայված է
Մյասնիկյան	1000	16	
Հակոբջանյան	900	13	
Օրջոնիկիձե	100	4	
26 Կոմիսարների	100	4	
Կամո	2250	43	
Իվանովի	265	10	
ԸՆԴԱՄԵՆԸ	6825	143	

Նշված ցանցի միջոցով մակերեսային ջրերը ուղղորդվում են նախորդ դարի 75-80-ական թվականներին քաղաքում կառուցված հակասողանքային կառուցվածքների մեջ և թափվում են Աղստև գետը. վերջիններս թվով 12 են (Կաղնի խաչի, թիվ 6-րդ դպրոցի, Կառավարական դաշայի, Իվանովի փողոցի, Ղշտողանի ձորի, Լատոկի ձորի, Ամյանների ձորի, Կալինինի 3-րդ և 4-րդ նրբանցքների, Գոլովինո գետի, Արովյան փողոցի և Մեծ Թալայի): Կառուցման օրից մինչև այժմ դրանցից և ոչ մեկը հիմնանորոգման չի ենթարկվել, որից առաջնահերթ մոտեցում են պահանջում 2-ը՝ Կաղնի խաչի, որը 3 մլն 241 հազ. դրամ նախահաշվային արժեքով ներկայումս պետք է նորոգի համայնքների միությունը, և Մեծ Թալայի հեղեղատարը, որի անմխիթար վիճակի պատճառով ջրերը Կամարինի փողոցով հոսելով գալիս են քաղաքի կենտրոն, մշտապես պատճառելով լուրջ վնասներ և քաղաքին և բնակիչների սեփական տարածքներին: Արդշինինվեստբանկի մոտ ներկայիս կառուցումն այդ հեղեղատի վերջնակետն է:

Ինչ վերաբերվում է քաղաքի տարածքով անցնող Աղստև գետին և նրա Հովվաջուր (Գոլովինկա) և Բլղան վտակներին, ապա ասելու բան լավ առումով չկա, քանի որ 1991թ. շահագործման հանձնված կոյուղու մաքրման կայանը, որը գտնվում է Հաղարծին գյուղում, մինչև օրս չի գործում 1,5 կմ գիծ պակաս կառուցելու պատճառով, հետևաբար կեղտաջրերը ամբողջովին լցվում են քաղաքի ջրային ավազանը, դրան էլ գումարվում է անասնագուներից դուրս եկող գոմաղբափողուկը, նաև բազմաթիվ անբարեխիղճ քաղաքացիների կողմից կենցաղային աղբի նետումը:

Կոյուղու կոլեկտորի վերականգնումը քաղաքի կոմունալ տնտեսության ամենաառաջնահերթ խնդիրն է:

Քաղաքի շրջակայքի սողանքային երևույթների դեմ պայքարի միջոցառումների շարքում 1975-1985թվականներին Միութենական կառավարության կողմից ֆինանսական ներդրումների հաշվին կառուցվել են ջրահեռացման 4 թունելներ՝

Ջուխտակ վանքեր	210մ
Խանջյանի ամառանոց	233մ
մեծ Թալայի	977մ.
Կինենատոգրաֆիստների տուն	300մ.
Ընդհանուր	1720 մ.

Կառուցման ավարտից առ այսօր այս կառուցվածքներով քաղաքային իշխանությունները չեն զբաղվել: Աշխարհագրական դիրքի պատճառով մեր քաղաքը տեղադրված է թեք լանջերի վրա և փողոցները կառուցված են կրող հենապատերով: Այն կազմում է շուրջ 89792 խմ ծավալ, որի զգալի մասը քայքայվել է, ենթակա է փլուզման (Մյասնիկյան և Սայաթ-Նովա փողոցներ):

Չենապատեր և կամուրջներ

Չենապատերի հիմնանորոգումը ևս համայնքի առաջնահերթ խնդիրներից է , որը սկսված է տարբեր ֆինանսական միջոցներով, այն պետք է շարունակել: Համենատաքար բարվոք վիճակում են քաղաքի կամուրջները: Դրանք թվով 22-ն են՝ Շահումյան փողոց 1, Գայի փողոց 1, Մյասնիկյան փողոց 3, Կանո փողոց 2, Գետափնյա ձախ փողոց 3, Գետափնյա աջ փողոց 5, Աբովյան փողոց 1, Սայաթ-Նովա փողոց 4(սկզբի և վերջի կամուրջների եզրապատները քանդված, թալանված են, կամուրջները ենթակա են հիմնանորոգման), Մաքսիմ Գորկու փողոց և Վասիլև փողոց:

Փողոցային լուսավորություն

Խորհրդային իշխանությունից քաղաքը ժառանգություն է ստացել 1550 հատ փողոցային լուսավորության էլ. սյուներ: 2004թ. քաղաքապետարանի պատվերով «Դիլիմաք» ՍՊԸ-ն վերականգնել է Մյասնիկյան, Կալինինի, Աբովյան Իվանով, Յովսեփյան , Առաջին, Մաքսիմ Գորկու, Կանո փողոցների և լճափի լուսավորությունը /թվով 585 սյուն/: Ավելի վաղ 2000-2002թվերին Մատինովի աղբյուրից մինչև լճափի կենցաղի տուն հատվածում տեղադրվել է 30 հատ դեկորատիվ էլեկտրասյուներ: 2005 թվականի հուլիս-հոկտեմբեր ամիսներին վերականգնվել է Սայաթ-Նովա, 26Կոմիսարների, Օրջոնիկիձե, Կամարինի, Գետափնյա ձախ, Կալինինիից Գետափնյա տանող, Հակոբջանյան փողոցների, Կաղնի-Խաչ թաղամասի փողոցային լուսավորությունը: Ցանցը վերականգնվել է ամբողջովին, լուսավորիչները տեղադրվել են մեկ ընդ մեջ (հոսանքի ծախսի խնայողության համար), թվով 246 հատ:

Կենտրոնական հրապարակում և հարակից տարածքում ևս կառուցվել է դեկորատիվ էլեկտրասյուներ թվով 94 լամպով:

Դեռևս լուսավորությունը վերականգնված չէ Օրջոնիկիձե 4-րդ նրբանցքում, Մխիթարյան (փողոցի վերջնամասը), Մանթաշյան, Աղայան փողոցներում, Հակոբջանյան և Կալինինի նրբանցքներում, Շամախյան և Անդրանիկի թաղամասերում : Վերականգնված փողոցային լուսավորության և շատրվանների վրա տարեկան ծախսը մոտավոր հաշվարկով կկազմի 15մլն. դրամ:

Քաղաքի ջրնուղի ցանցի վիճակի նկարագրություն

Արտաքին ցանցն ունի 16 կմ երկարություն, ներքին ցանցը՝ 101 կմ: Բնակչությանը խմելու ջուրը մատակարարվում է ջրի մաքրման երեք՝ Գոլովինոյի, Բլդանի և Ֆրոլովի բալկայի կայանների միջոցով, որոնց նախագծային կարողությունը 140լ/վրկ է: Դրանք կառուցվել են համապատասխանաբար 1962, 1976 և 1987 թվականներին: Կայանները սնվում են գետային 6 ընդունիչներից (չհաշված Շամախյանը):

ԽՍՀՄ-ի փլուզումից հետո քաղաքի ջրամատակարարման համակարգում հիմնանորոգման աշխատանքներ համարյա չեն կատարվել. այն անմխիթար վիճակում է, բացառությամբ 2003թ. Կանո փողոցում կառուցած 2,5 կմ երկարությամբ ջրագծից և 2005թ. Շամախյան և Իվանովո փողոցներում կառուցած 2,5 և 0,9 կմ ջրագծից: 2004թվ. ՀՀ կառավարությանն առընթեր ջրային տնտեսության պետական կոմիտեի «Հայջրնուղկոյուղի» ՓԲԸ-ն ընդառաջելով համայնքի ղեկավարության կողմից բազմիցս բարձրացրած խնդրանքներին, վերանորոգման ենթարկեցին ջրընդունիչ բոլոր ավազանները: Վերականգնվեց Բլդանի եւ Ֆրոլովի շրջապտույտի պարզարանները և սանիտարական գոտու պաշտպանիչ ցանցը, որի շնորհիվ որոշակի բարելավվել է ջրի մաքրման կայաններ մտնող ջրի քանակն ու որակը: Սակայն անձրևային եղանակներին մաքրման կայանի նստվածքային կարողությունների ոչ բարվոք վիճակի պատճառով արգելվում է ջրի մուտքը կայաններ (դրանք գործում են իրենց կարողությամբ ոչ համապատասխան՝ 35 լ/վրկ) նվազում է ջրամատակարարման գրաֆիկը քաղաքում:

2005թ. ընթացքում նախագծվել է՝ Գոլովինոյի և Ֆրոլովի բալկայի մաքրման կայանների հիմնովին նորոգում, Գոլովինո թաղամասում նոր ջրամբարի կառուցում, քլորակայանների հիմնանորոգում: Այնուհետև Թախտայի և Կաղնի խաչ ջրամբարների հիմնանորոգում: Բոլոր բազմաբնակարան շենքերի մուտքագծերի նորոգում, ջրաչափական հանգույցների հիմնանորոգում:

Քաղաքի գերեզմանատներ

Քաղաքն ունի 8 գերեզմանատուն, որոնցից Պապանինո թաղամասի և Մյասնիկյան փողոցի գերեզմանատները վաղուց փակված են ըստ հատակագծի: Սակայն Պապանինոյի գերեզմանատունը հսկողությունից դուրս մնալու պատճառով՝ դեպի «Դիլիջան» առողջարան ինքնաբուխ ընդարձակվում է : Շլորկուտի գերեզմանատան տեղի հատկացումը վերջինիս սպառված լինելու պատճառով էր, որ կատարվեց: Բոլոր գերեզմանատները համայնքի տեսադաշտից դուրս են թողնված, չկա խնամք, պահպանություն, դեպի գերեզմանատուն և ներգերեզմանոցային ճանապարհները անբարեկարգ են, Շլորկուտինը՝ համարյա անանցանելի մարդատար մեքենաների համար: Վերջինիս տարածքում ընդգետնյա ջրեր կան, որոնք ծավալվելով տարածքում առաջացրել են ճահճուտ, չկա աղբյուր: Անհրաժեշտ է կատարել գերեզմանատների վիճակի ուսումնասիրություն և ձեռնարկել վերահսկողության միջոցառումներ:

Բնակելի ֆոնդ

Դիլիջանի համայնքում կա 101 բազմաբնակարան բնակելի շենքեր, որոնցից՝

շենքերի վիճակը	հատ
վթարային	90
3-րդ կարգի	15
2-րդ կարգի	75

3 – ընդամենը 3 շենքերի 1/3 մասը ունեն վթարայնության 4 – ընդամենը 77 շենքերի տանիքները գտնվում են ծայրահեղ վատ վիճակում, որոնց վերանորոգման համար պահանջվում է շուրջ 50 – 55 միլիոն դրամ: Նույն վիճակում են նաև շենքերի կոյուղագծերը և ջրագծերը: Տարիների ընթացքում դրանք չվերանորոգելու պատճառով քայքայվել և շարքից դուրս են եկել: Բազմաբնակարան շենքերի մեծ մասի նկուղային հարկում առկա է ջրի հոսք: Բազմաբնակարան շենքերում չեն գործում կենտրոնական ջեռուցման համակարգերը: Բնակարանների մեծ մասի (912 բնակարան) ջեռուցման համար վառելիք է հանդիսանում փայտը, մի մասն էլ (824 բնակարան) օգտվում է գազից: Չնչին մաս են կազմում (27 բնակարան) էլեկտրաէներգիայով ջեռուցվող բնակարանները: Համայնքի տարածքում գտնվող 101 բազմաբնակարան շենքերից 98 – ը համայնքային ենթակայության են: Համայնքն ունի նաև երկրաշարժից հետո մինչև 20 – 30 % - ով կառուցված 4 շենքեր որոնք ընդգրկված են ՀՀ կառավարության «Աղետի հետևանքների վերացման» ծրագրում: 2001 թվականից հետո, այդ ծրագրով, փուլ առ փուլ իրականացվել է 1 բազմաբնակարան, անավարտ շենքի շահագործում և թվով 36, երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքներ ստացել են նոր բնակարաններ:

Համայնքի բնակֆոնդի ընդհանուր մակերեսը 390,9 հազ. քմ է, որից բնակելի մակերեսը կազմում է 285,3 հազ. քմ: 2753 բնակարաններից 2488 - ը սեփականաշնորհված են, մնացածը՝ համայնքային, փակ բնակարանների թիվը՝ 990:

Համայնքում կա 15 բարձրահարկ շենքեր (9 հարկանի), որոնցում չեն գործում վերելակները: Վերջիններս թալանված են, փչացած են էլեկտրական շարժիչները: Դրանց վերականգնման համար անհրաժեշտ է շուրջ 22 մլն. դրամ:

Համայնքում բնակարանի կարիքավորների հերթացուցակում ընդգրկված են 193 ընտանիքներ, որոնցից 48 – ը ընդգրկված են երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած և դեռևս բնակարանով չապահովվածների ցուցակում:

Ֆինանսական միջոցների գնահատում և կանխատեսում

Համայնքի նպատակային գործունեությունը ապահովելու համար անհրաժեշտ է մշակել ֆինանսական միջոցների գնահատման, կանխատեսման և հայթայթման ճկուն մեխանիզմ:

Հողի հարկի և գույքահարկի գանձումը առավել արդյունավետ կազմակերպելու համար նախատեսվում է բնակչությանը պարբերաբար տեղեկացնել պարտքերի առաջացման և դրանց մարման հետ կապված պարզաբանումները: Մեծ ուշադրություն է դարձվելու սեփական եկամուտների հավաքագրման աշխատանքների արդյունավետության բարձրացման վրա, նախատեսվում է կազմակերպել հարկատուների հաշվառում, կատարել եկամուտների վերլուծություն:

Համայնքի ֆինանսական սեփական մուտքերի հարստացմանը կնպաստի տեղական տուրքերի և վճարների սահմանումը և գանձումը: Տեղական տուրքի աճին նպաստում է նոր կառուցվող օբյեկտների շինանարության համար գանձվող գումարները: Ինչպես նաև ի հայտ են գալիս եկամուտի նոր աղբյուրներ՝ նոր ծառայությունների առաջացման և գործարկման հետ կապված /տաքսիների համար նախատեսված տուրքեր և այլն/: Ձգալի աճ է գրանցվել սեփական փոխադրամիջոց ունեցողների, հետևաբար նաև գույքահարկ վճարող քաղաքացիների շրջանում:

Համայնքի բյուջեի մուտքերի զգալի մաս է կազմում համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վճարները:

**ԴԻԼԻՉԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2005Թ. ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻ
ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ ԵՎ 2006-2008թ.թ. ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄԸ /հազ. դրամ/**

N		Եկամտատեսակի անվանումը	Տարեկան բյուջեն 2005թ.			2006թ. կանխատեսվող	2007թ. կանխատեսվող	2008թ. կանխատեսվող
խումբ	ենթախումբ		ալլան.	փաստացի	կատ. % տար. ալլ. նկատմամբ			
1		ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ԸՆԴԱՄԵՆԸ	168672.1	161084.3	95.5	194610.3	219699.0	223899.0
1		Ընդամենը հարկային եկամուտներ	33665.0	31974.8	95.0	55088.0	73020.0	74020.0
1	1	Հողի հարկ	2700.0	5799.6	214.8	3675.0	4410.0	5410.0
1	2	Գույքահարկ	30965.0	26175.2	84.5	51413.0	68610.0	68610.0
2	1	ՀՀ օրենսդրությամբ սահմանված պետական տուրքեր	4850.0	5681.0	117.1	5250.0	5857.6	5857.6
2	2	Ընդամենը տեղական տուրքեր /թույլտվության համար/	5050.0	4830.6	95.7	5253.0	6008.0	6008.0
		ա) Նոր կառուցվող օբյեկտների շինարարություն	500.0	1608.4	321.7	500.0	600.0	600.0
		բ) Օբյեկտները վերակառուցելու, ամրացնելու, արտաքին տեսքը փոխելու աշխատանքներ	60.0	50.0		15.0	17.0	17.0
		գ) Օբյեկտները քանդելու աշխատանքներ				10.0	11.0	11.0
		դ) Ոգելից խմիչքների և /կամ/ ծխախոտի արտադրանքի վաճառք	2520.0	2235.0	88.7	2748.0	3100.0	3100.0
		- հիմնական շինությունների ներսում	1404.0	1377.5	98.1	1440.0	1600.0	1600.0
		-ոչ հիմնական շինությունների ներսում	1116.0	857.5	76.8	1308.0	1500.0	1500.0
		ե) Բացօթյա վաճառք կազմակերպելու	800.0	524.2	65.5	600.0	710.0	710.0
		- Գազ վառելիքաբաշյուղային նյութեր	800.0	524.2	65.5	600.0	710.0	710.0
		զ) Խաղատներ, բաղնիքներ, հանրային սննդի և զվարճանքի օբյեկտներ՝ 24:00-ից հետո աշխատելու				240.0	260.0	260.0
		է) Արտաքին զոլվազդ տեղադրելու	250.0		0.0	600.0	700.0	700.0
		թ) Ընտանի կենդանի պահելու թույլտվություն	500.0	265.0	53.0	300.0	350	350
		ժ) Մարդատար տաքսու ծառայություն իրակ. թույլտվություն	420.0	148.0	35.2	240.0	260	260
3		Ոչ հարկային եկամուտներ	50410.2	43901.0	87.1	48964.6	55711.0	58911.0
3	1	ա) Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ	32379.6	24476.7	75.6	32600.0	37000.0	37000.0
		բ) համայնքային հիմնարկների հաշվեկշիռ. հաշվ. այլ գույքի վարձակալության եկամուտներ	4500.0	5651.7	125.6	5000.0	5800.0	9000.0
3	3	Վարչական իրավախախտումների պատժամիջոցներից եկամուտներ	10.0	24.3	243.0	10.0	11.0	11.0
3	4	Տեղական վճարներ	395.0	1135.0	287.3	3045.0	3600.0	3600.0
3	5	Այլ ոչ հարկային եկամուտներ	13125.6	12613.3	96.1	8309.6	9300.0	9300.0
4		Պաշտոնական տրանսֆերտներ ընդամենը	74621.9	74621.9	100.0	79102.4	79102.4	79102.4
4	1	ա) ՀՀ պետական բյուջեից տրամադրվող՝ դոտացիա	73121.9	73121.9	100.0	79102.4	79102.4	79102.4

	ընդամենը, այդ թվում							
	-ընթացիկ տարվա դոտացիա	73121.9	73121.9	100.0	79102.4	79102.4	79102.4	
	բ) Այլ աղբյուրներից ստացվող պաշտոնական ընթացիկ տրասֆերտներ	1500.0	1500.0	100.0				
6	Տարեսկզբից ազատ մնացորդ	75.0	75.0		952.3			
II	Ֆոնդային բյուջե	247700.1	238332.6	96.2	100693.2	92888.0	42662.0	
1	Համայնքային սեփականություն համարվող գույքի օտարումից	98687.4	85906.1	87.0	100000.0	92888.0	42662.0	
2	Այլ հիմնական միջոցների օտարում	5490.0	8916.5	162.4				
4	Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ /սուբվենցիաներ/	130000.0	129987.3	100.0				
5	Տարեսկզբի ազատ մնացորդ	13522.7	13522.7		693.2			
	ԸՆԴԱՄԵՆԸ (I + II)	416372.2	399416.9	95.9	295303.5	312587.0	266561.0	

Համայնքային բնույթի այլ ծառայություններ

Քաղաքապետարանի տեղեկատվական վերլուծական կենտրոնը գործում է 2003 թվականից: Աշխատելով քարտուղարության հետ բաժինն իրականացնում է մի շարք գործընթացներ՝ այդ թվում քաղաքապետարանի և ավագանու գործավարության կազմակերպման ավտոմատացում, զարգացման ծրագրերի մշակում, ինչպես նաև իրականացնում է քաղաքապետարանի «Դիլիջան» պաշտոնաթերթի նյութերի հավաքումն ու էջադրումը:

Ռազմավարական հիմնահարցեր, նպատակներ, երկարաժամկետ խնդիրներ

Կառավարման համակարգ

Հիմնահարցեր

- Բնակչության որոշ մասի անտեղյակություն իր հարկային պարտավորությունների մասին
- Բնակչության գերակշռող մասի չիրազեկվածություն իր մուծած հարկերից համայնքի բյուջեի ձևավորվելու մասին
- Հարկային տեսչությունից ժառանգված գույքահարկի բազայի անճշտությունների առկայություն

Նպատակ

Բարձրացնել հարկերի գանձման արդյունավետությունը՝ կիրառելով ավելի ճկուն մեխանիզմներ:

Երկարաժամկետ խնդիրներ

1. Օգտագործելով տեղական լրատվության միջոցները՝ իրազեկել ազգաբնակչությանը համայնքի բյուջեի ձևավորման գործընթացում իր հարկային պարտավորությունների կատարման նշանակության մասին
2. Բնակչության պարբերաբար տեղեկացում՝ պարտքերի առաջացման և նրա մասնակի կամ լրիվ մարման հետ կապված բոլոր պարզաբանումներով
3. Բաժնի աշխատակիցների մասնագիտական և համակարգչային վերապատրաստում՝ գույքահարկի գանձման աշխատանքի արդյունավետության բարձրացման համար
4. Ավելացնել մատուցվող ծառայությունների ծավալները 20 % - ով:

Համայնքային բնույթի այլ ծառայություններ

Հիմնահարցեր

- անհրաժեշտ համակարգչային տեխնիկայի անբավարար քանակություն
- զոյություն ունեցող համակարգիչների և տեխնիկայի բարոյական և ֆիզիկական մաշվածություն
- ցանցի ոչ նորմալ աշխատանքի առկայություն
- բնակչության Register ծրագրի բացակայություն

Նպատակ

Բարելավել բնակչությանը տրվող տեղեկատվության մակարդակն ու որակը, սերտացնել քաղաքապետարանի և բնակչության միջև եղած կապը, քաղաքապետարանի աշխատանքը դարձնել թափանցիկ ու հասկանալի:

Խնդիրներ

5. Ձեռք բերել անհրաժեշտ քանակությամբ համակարգչային տեխնիկա, թվային ֆոտոխցիկ / մոտ. 5 մլն. դրամ/
6. Ստեղծել հուսալի, որակյալ ցանց
7. Տեղակայել Register ծրագիր
8. Ապահովել աշխատակիցների մասնագիտական վերապատրաստում
9. Մասնակցել զարգացման նոր ծրագրերի
10. Ավելացնել մատուցվող ծառայությունների ծավալները 20 % -ով:

Մշակույթի, կրթության, առողջապահության և սպորտի բաժին

Երկարաժամկետ խնդիրները սամանվել են երեք տարի ժամանակով

Երկրագիտական թանգարան

Հիմնահարցեր

- Շենքի կիսաքանդ վիճակ:
- Անհրաժեշտ գույքի բացակայություն:
- Ջեռուցման բացակայություն:
- Ցուցանմուշների աղքատություն:

Նպատակ

Թանգարանն ընդգրկել հանրապետության զբոսաշրջության տարբեր երթուղիներում, այն դարձնել հետաքրքրաշարժ և գրավիչ :

Երկարաժամկետ խնդիրներ

11. Քանդել և վերակառուցել երկրագիտական թանգարանի շենքը:
12. Ավելացնել գույքային բազան, (ցուցադարակներ – 20 հատ, նկարների շրջանակներ – 100 հատ, ցուցանմուշի պատվանդան – 50 հատ, վարագույրներ – 28 կոմպլեկտ)
13. Ձեռք բերել նոր թանգարանային մուշներ՝ ըստ ֆինանսավորման – 350 հազ. դրամ:

Մշակույթի պալատ

Հիմնահարցեր

- Պալատի շենքի անբավարար պայմաններ:
- Գեղարվեստական խմբերի համապատասխան հագուստների պակաս:
- Գույքի անբավարար վիճակ:
- Ջեռուցուման բացակայություն:

Նպատակ

Ջարգացնել քաղաքի մշակութային կյանքը:

Երկարաժամկետ խնդիրներ

14. Վերանորոգել նշակույթի պալատի շենքը:
15. Ձեռք բերել գեղարվեստական խմբերի հագուստներ (55 կոմպլեկտ);
16. Ձեռք բերել նոր գույք (թատերական աթոռներ – 200հատ, սեղաններ –10հատ, անհատական աթոռներ 50հատ, ձայնային, լույսային և տեսա(video) սարքեր – 1ական կոմպլեկտ)
17. Կառուցել լոկալ կաթսայատուն ընդհանուր ջեռուցման համակարգով:

Չովի. Շարանբեյանի անվան գեղարվեստի դպրոց

Չիմնահարցեր

- Դպրոցի շենքի անբավարար պայմաններ:
- Անհրաժեշտ իրերի և նյութերի բացակայություն:

Նպատակ

Բարելավել հիմնարկի շենքային պայմանները, ավելացնել դպրոց հաճախող երեխաների թիվը և բարելավել նրանց գեղագիտական դաստիարակության կազմակերպումը:

Երկարաժամկետ խնդիրներ

18. Ձեռք բերել էտյուդնիկ, գիպսե ֆիգուրներ, գիպս, ներկեր, վրձիմներ, փայտ, թել և այլն:
19. Վերանորոգել գեղարվեստի դպրոցի շենքի տանիքը և դահլիճը:

Մանկական երաժշտական դպրոց

Չիմնահարցեր

- Դպրոցի շենքի անբավարար պայմաններ:
- Անհրաժեշտ գույքի և նոտային գրականության բացակայություն:
- Ջեռուցման բացակայություն:

Նպատակ

Բարելավել երաժշտական կրթության ապահովման պայմանները և կազմակերպումը:

Երկարաժամկետ խնդիրներ

20. Վերանորոգել երաժշտական դպրոցի տանիքը և դասասենյակները:
21. Դպրոցն ապահովել անհրաժեշտ գույքով և երաժշտական գրականությամբ (աթոռներ –20, սեղաններ – 10, վարագույրներ – 10, նոտային գրականություն- 300):
22. Գազիֆիկացնել ջեռուցման համակարգը:

Դիլիջանի գրադարանների կենտրոնացված համակարգ

Հիմնահարցեր

- Կենտրոնական գրադարանի շենքի անմխիթար վիճակ:
- Նոր գրականության բացակայություն:
- Անհրաժեշտ սարքավորումների և գույքի պակաս:

Նպատակ

Բարելավել բնակչության գրադարանային-մատենագիտական սպասարկման մակարդակը:

Երկարաժամկետ խնդիրներ

23. Վերանորոգել գրադարանի շենքը:

24. Ավելացնել գրքերի քանակը 3000 կտորով:

25. Ձեռք բերել 1 բազմացնող սարք, 1 գունավոր սկաներ և տպիչ, 10 գրադարակ, 20 մանկական սեղան, 80 մանկական աթոռ:

Մարզահամալիր

Հիմնահարցեր

- Շենքային անբավարար պայմաններ:
- Թույլ գույքային բազա:
- Մարզադաշտի ոռոգման ջրագծի բացակայություն և խտտածածկի անբավարար վիճակ:

Նպատակ

Ապահովել քաղաքի մարզական կյանքի բնականոն զարգացումը:

Երկարաժամկետ խնդիրներ

26. Շենքի հիմնանորոգում:

27. Նոր մարզագույքի ձեռք բերում (մարզական ներքնակ-10, ռինգ-1, ըմբշամարտի ներքնակ-1, ֆուտբոլի ցանց-3, վոլեյբոլի ցանց-3, բասկետբոլի ցանց-3, շվեդական պատ-2, այծուկ-2, կամրջակ-2, գնդակ-60, մարզահագուստ-150):

28. Վերականգնել մարզադաշտի 350 մետր ոռոգման ջրագիծը:

29. Վերականգնել մարզադաշտի 200 քառ. մ. խտտածածկ:

Նախադպրոցական հիմնարկներ

Հիմնահարցեր

- Թիվ 7, 11 և 12 մանկապարտեզների շենքերի անբավարար վիճակ:
- Թիվ 6 մանկապարտեզի սան. հանգույցի անմխիթար վիճակ:
- Թիվ 6, 7, 10, և 12 մանկապարտեզների ջեռուցման անբավարար վիճակ:
- Համայնքի մանկապարտեզների բակերի, խաղահրապարակների, գույքի և խաղալիքների անբավարար քանակություն:

Նպատակ

Բարելավել երեխաների նախադպրոցական կրթության կազմակերպումը և ավելացնել տարիքային խմբերում երեխաների ընդգրկվածության աստիճանը:
Երկարաժամկետ խնդիրներ

30. Թիվ 7, 11 և 12 մանկապարտեզների շենքերի հիմնանորոգում:
31. Վերանորոգել թիվ 6 մանկապարտեզի սան. հանգույցը:
32. Գազաֆիկացված թիվ 6, 10 և 12 մանկապարտեզների շահագործման ծախսեր:
33. Բարեկարգել համայնքի թվով 6 մանկապարտեզների բակերը և խաղահրապարակները:
34. Ձեռք բերել անհրաժեշտ գույք և խաղալիքներ (մանկական սեղան-100, մանկական աթոռ-400, զգեստապահարան-100, սպիտակեղենի կոմպլեկտ-300, խաղալիքներ-300):

Մանկական զբոսայգի

Հիմնահարցեր

- Ծառուղիների անբավարար թիվ:
- Խաղասրահի անբավարար վիճակ:
- Նոր ժամանակակից կարուսելների բացակայություն:
- Գիշերային լուսավորության անբավարար վիճակ:

Նպատակ

Բնակչության և զբոսաշրջիկների ակտիվ հանգստի կազմակերպման բարելավում:

Երկարաժամկետ խնդիրներ

35. 2 նոր ծառուղիների ստեղծում:
36. Խաղասրահի հիմնանորոգում:
37. Ձեռք բերել ժամանակակից 3 կարուսելներ:
38. Նորոգել լուսավորության ցանցը և տեղադրել 22 նոր լուսամփոփներ:
39. Ավելացնել մատուցվող ծառայությունների ծավալները 20 % -ով:

Բնակելի ֆոնդի շահագործման և պահպանման, տրանսպորտի, առևտրի և սպասարկումների, աշխատանքի, սոցիալական ծառայության կանոնակարգման բաժին

Հիմնահարցեր

- 15 բազմաբնակարան 3 – րդ կարգի վթարային շենքերի առկայություն, որտեղ բնակվում են մոտ 250 ընտանիքներ:

- Երկրաչարժի հետևանքով անօթևան մնացած 48 ընտանիքների առկայություն:
- Բազմաբնակարան շենքերի տանիքների, տանիքների ջրհորդանների, շենքերը սնուցող ջրագծերի, կոյուղագծերի, շքանուտքերի և վերելակների անբավարար վիճակ:

Նպատակ

Բարելավել համայնքի բազմաբնակարան շենքերի ընդհանուր օգտագործման տարածքների և ենթակառուցվածքների վիճակը:

Երկարաժամկետ խնդիրներ

40. Ապահովել 77 բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգումը:
41. Ապահովել 70 բազմաբնակարան շենքերի սնուցող ջրագծերի վերանորոգումը:
42. Ապահովել 15 բազմաբնակարան շենքերի կոյուղագծերի վերանորոգումը:
43. Ապահովել 12 բարձրահարկ բազմաբնակարան շենքերի վերելակների վերականգնումը:
44. 3 բակերում ստեղծել խաղահրապարակներ և բարեկարգել:

Քաղաքաշինության և հողօգտագործման բաժին

Հիմնահարցեր

- Քաղաքում առկա 30 առողջարանային նշանակության օբյեկտների անբավար վիճակ և (գործում են ընդամենը 8-ը):
- Քաղաքի տարածքում առկա սողանքային երևույթների կատաստրոֆիկ վիճակ:
- Ներհամայնքային փողոցների անբարեկարգ վիճակ:
- Խմելու ջրի համակարգի անմխիթար վիճակ:
- Կենտրոնական փողոցներին հարող հենապատերի, շինությունների և ցանկապատերի անշուք ու անբարեկարգ վիճակ:
- Քաղաքին յուրահատուկ կոլորիտի կորստյան վտանգ:
- Քաղաքի մշակութային նշանակության շենքերի անմխիթար վիճակ:
- Գետի վարարումներից առաջացող հեղեղումների վտանգ:

ՆՊԱՏԱԿ

Համայնքի կենսագործունեության համար ստեղծել բարենպաստ տարածական միջավայր, քաղաքը դիտելով որպես միասնական քաղաքաշինական համալիր, հաշվի առնելով քաղաքի պատմամշակութային և բնական միջավայրի բնույթը պահպանելու անհրաժեշտությունը:

Երկարաժամկետ խնդիրներ

45. Վերակառուցել և բարեկարգել քաղաքային արհեստական լիճն իր շրջակայքով:
46. Կատարել խոշորամասշտաբ ծառատունկ Գետափնյա փողոցի աջ և ձախ հատվածներում՝ ամբողջ երկարությամբ (1000 հատ փշատերև ծառ):

47. Քաղաքի որոշ հատվածներում տեղադրել արհեստական լուսավորության դեկորատիվ լապտերներ (200հատ):
48. Քաղաքի որոշ հատվածներում բնակելի շենքերի բակային մասերը բարեկարգել և կանաչապատել (1հա), տեղադրել մանկական խաղեր(150հատ):
49. Կատարել գետի հենապատերի վերանորոգման և վերակառուցման աշխատանքներ (3կմ):
50. Բարեկարգել և վերակառուցել քաղաքային զբոսայգին (4հա):
51. Ս. Գորկի, Կալինինի, Թբիլիսյան ճանապարհների օղակաձև խաչմերուկի և նրան հարակից տարածքի ճարտարապետական ձևավորում(0.2հա):
52. Հնգաթև հուշարձանին հարակից տարածքի բարեկարգում 0.3հա:
53. Լճափից մինչև հրապարակ ընկած տարածքի ճարտարապետական ձևավորում (հակասողանքային միջոցառումների իրականացում, այդ թվում՝ դրենաժների կառուցում (150մ.=3մլն), դեկորատիվ հենապատերի կառուցում (120մ.=18մլն), դեկորատիվ լապտերների տեղադրում (70հատ.=5.6մլն), քանդակային էլեմենտների կառուցում (15հատ.=4.5մլն) և «Առյուծների աստիճանների» կապիտալ վերակառուցում:
54. Ավարտել Շամախյան թաղամաս տանող ճանապարհի հիմնանորոգումը:
55. Հիմնանորոգել Սյասնիկյան փողոցը 5.18հա.:/
56. Հիմնանորոգել Սայաթ-Նովա փողոցը 5.26հա :
57. Հիմնանորոգել Շահումյան փողոցը 1.78հա:
58. Կառուցել քաղաքային լճին հարակից Սուրբ Աստվածածին եկեղեցին:
59. Գետափնյա փողոցի մարզային համալիրի (մարզադաշտեր) վերակառուցում, վերանորոգում, նրան կից փակ լողավազանի շենքի կառուցում:
60. Հայրենական Մեծ պատերազմում զոհվածների հիշատակին կառուցված հուշարձանային համալիրի վերակառուցում, բարեկարգում:
61. Վերակառուցել քաղաքային տրանսպորտի կանգառները (15հատ):
62. Աղստև գետի հունի մասնակի մաքրում Գետափնյա փողոցի հատվածում:
63. Դիլիջան քաղաքի թվով 3 գլխավոր մուտքերի կառուցում:
64. Կամուրջների վերակառուցում(5հատ):
65. Շամախյան թաղամասի Ս. Պողոս եկեղեցու կառուցման համայնքային մասնակցություն:
66. Ավարտին հասցնել քաղաքի փողոցների էլեկտրական լուսավորության աշխատանքները, 60հատ նոր դեկորատիվ լապտերների տեղադրմամբ:
67. Թախտա տանող ճանապարհի հատվածի հիմնանորոգում:
68. Անդրանիկի թաղամաս տանող ճանապարհի հատվածի հիմնանորոգում:

69. Կառուցել բնական ակունքների վրա հուշարձան-աղբյուրներ Ուսանողական, Ջրհողեր, Պապանինո, Բլղանչայ թաղամասերում (4 հատ):

Գյուղատնտեսություն

Հիմնահարցեր

- Գյուղացիական տնտեսությունների անբավարար վիճակ
- Տեխնիկայի բացակայություն
- Ցածր բերքատվություն՝ տարիներ շարունակ հողը չպարարտացնելու պատճառով
- Հանդամիջյան ճանապարհների ոչ բարվոք վիճակ
- Տոհմային անասնապահության բացակայություն
- Գյուղմթերքների իրացման և վերամշակման հնարավորությունների բացակայություն

Նպատակ

Գյուղատնտեսությամբ զբաղվող բնակչության համար ստեղծել ներհամայնքային բավարար պայմաններ

Երկարաժամկետ խնդիրներ

70. Գյուղմթերքների վերամշակմամբ և անասնապահությամբ զբաղվող քաղաքացիների համար կազմակերպել սեմինար-դասընթացներ՝ կատարվող աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու համար:
71. Ստեղծել գյուղմթերքների վերամշակմամբ և անասնապահությամբ զբաղվող քաղաքացիների փոքրիկ համայնքեր՝ առաջավոր փորձի փոխանակման համար:
72. Սրցույթների կազմակերպում հողատարածքների խոշորացման նպատակով:
73. Հանդամիջյան ճանապարհների բարելավում /60կմ/ :
74. Գործատուների ներգրավում տեղում գյուղմթերքների վերամշակման արտադրամասեր ստեղծելու համար

Բնության, կոմունալ տնտեսության կանոնակարգման բաժին

Հիմնահարցեր

- Բնակչությանը մատուցվող ծառայությունների ցածր մակարդակ:
- Քաղաքի քայքայված հենապատերի առկայություն:
- Փողոցների սանմաքրման վատ վիճակ:
- Սակերեսային ջրերի հեռացման և հակասողանքային կառուցվածքների անբավարար վիճակ
- Կոյուղու կոլեկտորի բացակայություն
- Ջրամատակարարման համակարգի անբավարար վիճակ

- Քերեզմանատների ճանապարհների և գերեզմանատների պահպանության անբավարար վիճակ

Նպատակ

Ապահովել բնակչությանը մատուցվող ծառայությունների բարձր մակարդակ:

Երկարաժամկետ խնդիրներ

75. Վերանորոգել մակերեսային ջրահեռացման ցանցը (6825մետր, 143դիտահոր):
76. Վերակառուցել գերեզմանատներ տանող ճանապարհների հատվածները -ըստ ֆինանսավորման
77. Կազմակերպել գերեզմանատների հսկողությունը (8հատ):
78. Ընդլայնել մաքրվող տարածքների մակերեսը 50%-ով:
79. Չեռք բերել և տեղադրել 150 հատ աղբարկղեր:
80. Ավելացնել մատուցվող ծառայությունների ծավալները 20 % -ով:

ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՌԱՋՆԱԳԵՐԹ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Կոդ	Խնդիրների բովանդակությունը	Չափորոշիչներ							Ընդամենը
